

1914 47 2057.



Дружеское Общество
изучения
и распространения
русского языка
и литературы
в
иностранной
академии наук
и литературы
в
иностранной
академии наук
и литературы

- 6 NOV 2011

6038

ՀԱՅԱՍՏԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՄԷՕՆ ՔՈՒՇՄԱՆԻ,
ՈՐԻՆ ԵՒ ՆԻԻՐՈՒՄ Է ԵՂԲԱՅՐԸ

891.99

Բ-91

Միջնաշրջան

ВУЗНО ТЕРА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЕВРОПЕЙСКОГО
Академии Наук
СССР

ՁԿՆԵՐԸ ՈՆՑ ԵՆ ԲՈՒՄՆՈՒՄ



ՀԱՅԱՍՏԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԳՈՐԾՈՅԹ

ՏՊԱՐԱՆ, ԼՈՍՏ, ԵՐԵՎԱՆ
1914

08.08.2013

60897

ՁԿՆԵՐԸ Ո՞ՆՑ ԵՆ ԲՈՒՄՆՈՒՄ

(Կատակերգ երեք գործոյթ*)

Գ Ո Ր Ծ Ո Յ Թ

ՀԱՄՕ՝ 22 տարեկան—սեմինարաւարտ ուսուցիչ:

ՎԻՐԳՈՒՇ՝ նրա կինը՝ 20 տարեկան—Հայոց դպրոցաւարտ:

ԴԱԻԻԹ՝ 40 տարեկան—հարեան քարտաշ:

ՍԵՂԲՈՄ՝ 50 տարեկան—թափառական գրքաց. մազերը՝ երկար. միրուքը՝ նօսր. քիթը՝ սուր-կախ. մէջքը՝ կռացած: Գլխին՝ հին շապօ, եզրները՝ կախ ընկած: Աչքերին՝ ակնոց. ձեռնին՝ երկար տերո-ղորմեա. հագին՝ երկար վերարկու. ինքը՝ խաչա-պող քահանայի պատկերով. ձայնը՝ խռպոտ:



59740-66

*) Ներկայացման հօնօրարի իրաւունքը վերապահւած է յօգուտ հայրենիքին՝ ուղղիստ Վարդաշէնի Հ. ծխ. դպրոցի գրադարանի Խնդրում եմ՝ իւրաքանչիւր ներկայացումից յատկացնել առ նւազն երեք ա. գիւղերից և հինգ ա. քաղաքներից: Այդ պայմանը կատարւած դէպքում ես միշտ համաձայն եմ ներկայացնելուն: Հասցէն՝ Вартаменъ (Елне. Г.).

ՁԿՆԵՐԸ Ո՞ՆՑ ԵՆ ԲՈՒՄՆՈՒՄ

(Կատակերգ երեք գործոյթ):

Ա. Գ Ո Ր Ծ Ո Յ Թ.

Հասարակ սենեակ. միջին և կողքի դռներ: Աջ պատի մօտ՝ տախտ դորդով, մութաքաներով և բարձիկներով. ձախ՝ քառանկիւնի սեղան՝ սփռոցով ծածկած, վրան զրքեր, տետրակներ և այլն: Անկիւնում՝ կլոր սեղան՝ վրան օղու շիշ և բաժակ: Սենեակում՝ աթոռներ: Պատերին՝ պատկերներ, քարտէզ, դասացուցակ, ժամացոյց: Ա. գործոյթը՝ ցերեկւայ ժամը 10-ին, Բ. և Գ. գործոյթները՝ երեկոյեան ժամը 9-ից յետոյ:

1 ՏԵՍ.

ՎԻՐԳՈՒՇ (մենակ).

ՎԻՐԳՈՒՇ.—(զալիս է, ձեռքին՝ մի խոր աման, մէջը՝ կենդանի ձկներ). Վհւյ, վհւյ վհւյ վհւյ. ի՞նչ էլ լաւերն են. ճիշտ՝ տեսնեմ՝ քանի՞սն են (դնում է տախտին եւ ձեռքով համարում). մէկ, երկու, երեք (յանկարծ ձեռքը քաշելով). վհւյ, սատկածը հնց վախեցրեց. լաւ՝ որ մօտս մարդ չկար. կծիծաղէին վրաս. շատ էլ լաւ կանկին, որ ծիծաղէին. ձուկն ի՞նչ է, որ մարդ նրանից վախէ՞լքոնանց յիմար սովորութիւնն է, էլի, որ վախենում են բոլոր անվտանգ բաներից — ձուկ-մուկ, գորտ-որդ, ջուլի-սօճը, ինչէ՞զբղէզ, մութ ու ջնուգ, մի խօսքով՝ բոլոր փոքրավանկ անուններից: (Վախված ձայնով համարում է). մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց: Ամա շատ լաւերն են, է. մեռած Մուկուշը տեսնեմ՝ հնց է բռն-նոտել. բոլորն էլ կարմրախայտ են... ի՞նչ համով կլինին. իրիկւան համար կտապակեմ. Համօս կզարմանայ ու կու-րախանայ. Քշֆշալով անուշ կտնի ու կարմիր գինին էլ

կկոնծի... (ամանը դնում է տախտի տակ, նստում, շարունակում կրկուց կարն ու քերթով մի պարի իղմնակ նւագում):

Չ ՏԵՍ.

ՎԻՐԳՈՒՇ ԵՒ ՀԱՄՕ.

ՀԱՄՕ.—(Մտնում է—յոզնած, ուտերին ձգած մի հին պինջակ. դիտին բանւորի նման Թաշկինակ կապած). Հա՛, էդ է. ես էնտեղ արեւումը խաշւեմ, ջարդւեմ՝ քեզ համար տաքտեղ-մաքտեղի մարդեր փորելով, դու էստեղ զուռնա ածա. երեւում է՝ միտդ հարսանիք է ընկել, հա՛, բարեկամ:

Վ.—(Կարը շուռ ու մուռ տալով). Համօ ջան, ի՞նչ անեմ, մեր հարսանիքն է միտս ընկել. օրէնք լինէր՝ ամեն տարի նորից հարսանիք անէին:

Հ.—(նստելով նրա կողքին, տախտի վրայ եւ ձեռն ուսին դնելով). Դրանից էլ հեշտ ի՞նչ կայ. կամ պէտք է թուրքանաս եւ ուզած ժամանակդ բօշամիշ ըլես, նոր մարդի գնաս, կամ պէտք է մարդիդ գլուխը շուտ ուտես ու ամեն տարի թաղա-թաղա մարդ ճարես մեր Փարաքարի կնանըքոնց նման:

Վ.—(Վերաւորում). Ամօթ քեզ, Համօ ջան. ես խօսմ է՞դ չեմ ասում:

Հ.—Բա էլ հնց ես ուզում հարսանիք անել: (Երկու ձեռքն իր զիսի յետեւը միացնելով նլմկոտում է): Հը՞:

Վ.—(Քիչ հեռանալով) Ես ասում եմ՝ մարդ ու կնիկ տարին մէկ նորից հարսանիք անէին, ուրախանային, բարեկամներով քէֆ անէին, իսկ դու...:

Հ.—(Մօտենալով) Հա՛, Վիրգուշ ջան, ես կարծեցի՝ տէր-տէրներին նման քէլէխ ես ուզում. (վեր է կենում, դիմացը կանգնում եւ ձեռքը նրա ուսին դնում). Դէ, որ էդպէս է, արի, նորից հարսանիք անենք. ի՞նչ կայ որ, մեր տէրը մենք չենք, հը՞. մի զուռնա է, էլի, փչել տւիր, ամեն կողմից սեւ ագռաւների պէս վրայ կթափւեն:

Վ.—(Չարունակելով կարը) Հա՛, էդ էր պակաս—խալխը կարծի, թէ գժւել ենք, «չալղու ենք ընկել»:

Հ.—Մի վախենար, չեն ասի. առաջուց հրաւեր հարսանաց կուղարկենք ամենքին. ճշմարիտ, ուզում ես, անենք. ամա հնց կպարենք միասին. (ընկելով նրա կոնքը եւ պար-ածելով):

Վ.—(Ազատւելով) Թող, պինջակդ պրծնեմ. էդ էր ֆեսցիլ, որ եղբորդ կնիկը ծափ տայ, ծիծաղի ու կնանիքն էլ տարին բոլոր մեզ բերնի ծամոն շինեն ու բամբասեն. չես իմանում մեր կնանըքոնց ջաղաց բերանը՞...

Հ.—(Մօտենալով օդու շշին). Վիրգուշ ջան, գիտես՞ ինչի են մեր կնանիքը ջաղաց բերան. նրա համար, որ էս առիւծի կաթից չեն քցում. որ քցեն, բերանները կէրւի, կուշ կգայ, քիչ կխօսեն...

Վ.—Ո՞ւր էր, թէ էդպէս լինէր. էն ժամանակ մեր հոգեւոր հայրերն իրենց քարոզները կարճ կկտրէին, որ ժողովուրդը բան հասկանար. բայց նրանք քանի շատ են խմում, էնքան տակից-զլխից շատ են խօսում եւ մանաւանդ իրար ոտի տակ քանդում...

Հ.—(Լցնելով բաժակը եւ նրա բերնին մօտեցնելով). Ա՛րի, մի հատ քցի, տես, հնց լաւն է, է՛. այ թէ մի լաւ կարմրախայտ էլ լինէր շոռ-շոռ խաշած, լազաթ կտարս Դէ, ուխդ բաց արա:

Վ.—(Յետ քաշւելով). Եւթկ, թո՛ւհ. դէն կորցուր. փիւֆ, (քիթը բռնում է) զաճկէս գնում է գրա հօտից. դուք էլ բան էք գտել, էլի. խմէ՛ք, գժւէ՛ք:

Հ.—(Բաժակը սեղանին դնելով, վերաւորում). Վիրգուշ ջան, ասենք՝ ի՞նչ ենք խմելով ենք գժւում, դուք, կնանիքդ, հենց առանց խմելու էլ սարսաղ էք. հաւանա, սուտ չի ասած, թէ «կնկայ մաղերը երկար ա, խելքը՝ կարճ», ախր, անուշ ջան, քէֆիդ էլ չդիպչի, մեր խելքը զլխներումս է, ձերը՝ այ, էստեղ, կրունկներում:

Վ.—(Թելն առամով կտրելով եւ պինջակը մի կողմ դնելով. խիստ վերաւորում). Գիտես, Համօ, էդ, ճշմարիտ է, ապած է, բայց բոլոր կանանց համար չի ապած. էնպէս մաքր կայ, որ մի հաւի խելք էլ չունի. բայց էնպէս կնիկ կայ,

որ տասը մարդի խելք ունի և, եթէ ուզի, քսան տղամարդի մի պարանով մէյմունի կխաղացնի:

Հ.—(Ըրնամարհանքով). Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ. (ըջորհն). Վիրգուշ ջան, էդ խօսքը մէկ ասել ես, մէկ էլ չասես, թէ չէ, ամենքը կծիծաղեն վրադ. (բարձրացնելով բաժակը եւ ծիծաղելով). հա, հա, հա, հա. կնի՛կ — խելք. միւնոյն է, թէ Մասիս, Հիւսիս...

Վ.—(Մօտենալով նրան, վիրաւորւած). Ուրեմն խելօք կնանիք չեն լինում, հա...

Հ.—Մի՞նչ և էսօր դեռ չեն եղել. բայց այսուհետեւ գուցէ լինին, երբ գորտերը երկինք թռչեն. հաւերը ծովում ապրեն, ձկները գետնից բուսնեն. մեր էն մարգերի միջից, որ ջրել եմ և հիմա պիտի փորեմ տաքտիկ-մաքտիկի համար. քո կենացը՝ (խմում է):

Վ.—(Յանկարծ ուրախացած. մի կողմ). Ի՞նչ լաւ ասաց. (բարձր). Համօ ջան, տես, թէ որքան խելօք էք տղամարդիկը՞. դու կարծում ես՝ հողի մէջ ձուկ չի լինում, հա...

Հ.—(Բաժակը ցած դնելով). Իհարկէ չի լինում. դա ի՞նչ ասելու բան է:

Վ.—Վայ, վայ, վայ, վայ. տօ, ի՞նչ ես խօսում. հէնց երէկ չէ, մէկէլ օրն իմ քեռունց բաղմանն իրենց այգում թարխունի տեղ քանդելիս ութ-իննը հատ մեծ-մեծ ձկներ է հանել գետնից. բոլորն էլ կարմրախայտ ու մուրձա. (նստում է եւ մուծաբան կոնի տակ վերցնում, յնւում):

Հ.—Սուտ կլինի, սուտ կլինի, Վիրգուշ ջան, չհաւատա...

Վ.—Ո՞նց թէ սուտ կլինի. անցեալ ուրբաթ էլ դերձակ Գրիգորի տղայ Սուրէնը կաղամբ ջրելիս մարգի միջից հինգ հատ կարմրախայտ է հանել:

Հ.—(Գլուխը քորելով). Ասենք՝ դերձակները զիւր էլ լաւ փչողներ են, ամա ի՞նչ ասեմ, գուցէ ջրի հետ են եկել, մտել մարգի մէջ, նրանք էլ տեսել, հանել են. էդ կարող է պատահել. բայց...

Վ.—(Արագ վեր կենալով). Ձէ, ասում եմ, է՛. հողի միջից,

հողի միջից. դնենքը վեր-վեր տնկած. ուզում ես մեր խնամի Մուղսի Գէորգին հարցուր. նա տեսել է:

Հ.—(Նորից ցնկելով բաժակը). Պա, պա, պա, պա. էն էլ Մուղսի Գէորգը, էն ստերի տոպրակը՞. նա օրը հազար սատանի ոտերը կնալի, բաց կթողի:

Վ.—(Իբր նեղացած). Ձէ, Համօ ջան, նրա մասին մեղք է բան ասելը:

Հ.—(Ծաղրով). Իհարկէ, իհարկէ, Մուղսի է, սո՛ւրբ է. փէշին ձուածնդ կեփւի. տօ, էդ սուտ ճգնաւոր, պօպօղաւոր և անպօպօղ վարդապետներն աղւէսի հետ մի գիշեր են աշխարհ եկել, այ Վիրգուշ...

Վ.—Ի՞նչ որ է. մարդը հօ տեսել է. դեռ կերել էլ է ձկներից...

Հ.—Լաւ, թող քո ասածը լինի. բայց ձուկն ի՞նչ կապ ունի կնկայ խելքի հետ. (բաժակը բարձրացնելով, հանդիսաւոր կերպով). Տիկնայք և պարոնայք, էս էլ խմենք Հայոց աշխարհի բոլոր կանանց կենացը. Աստուած նրանց չեղած խելքին ուժ, զօրութիւն և բարաքեաթ տայ. (մօտեցնում է բերնին) անճճճճ... (խմում է եւ բաժակը թրխկոցով տեղը դնում):

Վ.—Համօ ջան, էդ ի՞նչ ես անում. գոնէ հաց կեր, որ գլուխդ չընկնի էդ յիմար թոյնը. (Ուզում է գնալ):

Հ.—Մի վախենար, Վիրգուշ ջան, գլուխս շատ պինդ է. սրանով փորիս խաբարդար եմ անում, որ սենեակները սրբի, սարքի զարիբ ղօնաղների համար. էսօր, թվ գիտէ, ինչքն ես տալու ինձ. ամա սիրտս ձուկ է ուզում...

Վ.—Ձուկ հրտեղից է, Համօ ջան. բայց տոլմա եմ եփում. կո՛ւղես թերխաշ-թերխաշ բերիմ, մի քիչ նախաճաշ արա, մինչև որ ճաշի համար լաւ կեփի (կարը ղաւաքում է):

Հ.—Ա՛յ, էդ մէկը լաւ ասեցիր, իսկապէս փորս վեց-վեց է անում. էս անպիտան արաղը սիրտս խաշեց, շո՛ւտ արա, որ գնամ, մարգերը փորեմ, պըծնեմ:

Վ.—Բա որ ասում եմ՝ մի խմի. (գնում է):

Հ.—(Նստում է սեղանի մօտ, մի պարի եղանակ սուլում, մատնեղով թմբուկ զարկում եւ ուսերով պարում)։ Լաւ հոգի է Վիրգուլ, բայց խելքը մի քիչ իմ օրի է։ Բէնց լաւ էլ է, որ կանայք խելք չունին, թէ չէ՝ մենք տղամարդիկս, կկորչէինք դրանց ձեռքից։

Վ.—(Բերում է մատուցարանի մէջ հաց, տոլմա, պանիր եւ դնում Համօի առաջ, սեղանի վրայ) Համօ ջան, պանիր էլ եմ բերել, կուտես։

Հ.—Օ, Խորթակա էնպէս բացել է, որ քեզ էլ կուտեմ, հէր թէ պանիրը լինի։

Վ.—(Ծիծաղելով)։ Էն վաղի նշանածի նման աւելի կոթն էլ չհւտես։

Հ.—(Ծիծաղելով)։ Վահ, ի՞նչ ես ասում, հօ մոխրաթաւալ չեմ։ (դբաղւում է ուտելով)։

Վ.—(Տախտի տակից հանում է ձկնեղով ամանը եւ կամենում է գնալ)։ Էս միսն էլ տանեմ, մառանում դնեմ, որ չհոտի։

Հ.—Հա, լաւ միտս գցեցիր, մառանի էն կխառն կարասի կարմիր գինուց էլ մի շիշ բեր, որ մարդը խորը փորեմ, տաքտիղը կարմիր բռնանի։

Վ.—(Ուրախ)։ Շատ լաւ, Համօ ջան, դու փորդ պնդացրու, որ չհարբես։ (զնում է՝ ծաղրական եւ սպառնական դունչ անելով)։

3 ՏԵՍ.

ՀԱՄՕ (մենակ)։

Հ.—(Ախորժակով ուտում է մի երկու րոպէ)։ Ես ու իմ Աստաւածը, կնիկը լաւ բան է, և աւելի լաւ, երբ անխելք է։ (Ձեռով խփում է ծակատին)։ Կեցցես, գեղբա, մի ասող լինի, դրանցից հրն է խելօք, հը՞։ (Պատուը կծելով վեր է կենում, օդի ածում եւ բաժակը բարձրացնելով դառնում դէպի հասարակութիւնը)։ Ձեր բոլորիդ կենացը, տիկնայք փափկասունք Հայոց աշխարհ։ (Ծաղրով երգում է)։ «Բայց մեռ կանայք, ուր եղիշէ, ուր մեռ տիկնայք փափկասունք»։ (խմում է, բաժակի

տակը պաշում եւ թրխուցով դնում սեղանին)։ Եհ, լազլանթ, (ուտելով ման է դալիս)։ Էս սարսաղն էլ ինչո՞ւ ուշացաւ։ (յանկարձ ծիծաղելով)։ Հա, հա, հա, հա, հա։ Դեռ ուզում է հաւատացնել, թէ խելօք կնանիք կան աշխարհում։ Երևի սրանք իրենց Եւայով են ոգևորւել, է՞, որ Ադամին խաբեց։ Ախմախներ, էն էլ մի փորձանք էր, որ խեղճ ջահիլը խաթի մէջ ընկաւ զահրումար էլած կարմիր խնձորի համար, որի կէսը հլա մինչեւ էս օր էլ, ա՛յ, էստեղ մնացել է (ցոյց է տալիս բուր)։ Բա որ խելօք էք, հիմա ինչո՞ւ չէք կարողանում մի թէկուզ քաջալ-քոսոտ Ադամի խաբել, հը՞։ Ինչո՞ւ մեր բոլոր Ադամներն էլ էնպէս դինդինի են պար ածում ձեր խանդ-խաթուն պայծառափայլ Եւաներին, հը՞... (զուլխն օրօրելով)։ Է, բարեկամք եր, բարեկամք եր, էդպէս էք մտածում, որ խիարը ծուռն է բուսնում, է՞. մախլաւ։ (կրկին օդի է ածում եւ բաժակը դէս ու դէն տանելով երգում)։ «Հայ աղջիկներու կենացը, որ միշտ հայ մարդիկ կսիրեն։ միշտ իրենց մաքուր կպահեն, այս բաժակը նւիրենք»։ (Խմում է՝ յանկարձ բերանն ածելով եւ բաժակը ցած դնելով)։

4 ՏԵՍ.

ՀԱՄՕ ԵՒ ՎԻՐԳՈՒԾ.

Վ.—(Բերելով մի շիշ գինի)։ Քիչ ուշացայ, կարասը կողքի էր կուցել, հազիւ ուղղեցի։ Ղէհ, շուտ արա, Համօ ջան, օրն անցնում է, ես էլ շատ գործ ունիմ անելու։

Հ.—(Պանիր հաց ուտելով)։ Շատ լաւ էք հրամայում, Վիրգուլ խանւմ։ Ղէհ, որ էդպէս է, քո քնքոյշ ձեռքով մի կէս բաժակ ածիր, խմեմ ու գնամ, մնացածն էլ ճաշին կխմեմ։ հիմա կէս հարբած եմ, շատ որ խմեմ, կզժեմ, յետոյ կկարծես, թէ դու ինձնից խելօք ես։

Վ.—(Լիք բաժակը տալով նրան)։ Վերցուր, խմիր, որ աւելի խելօքանաս։

Հ.—Հօ չեմ նեղանում, Վիրգուլ ջան, բայց ախր, հոգիս

դուք ինչ անէք, է. մեղաւորն, ա՛յ, էն Աստուածն է, որ ձեզ քիչ խելք է տւել, մեզ՝ շատ:

Վ.—Քարոզ մի խօսիր, զինիդ խմիր:

Հ.—(Բաժակը սեղանին դնելով). Դարդ մի անիր, անհւշ ջան. մենք և դուք ամուսնական վեհ լծի տակ ջուխտ-ջուխտ, ջուխտ-ջուխտ շաղկապւելով՝ մի հատ կատարեալ մարդ ենք դառնում, ասում է Նիցչէն և Վայնինգերը և հայ փիլիսոփայ Ֆրանգեանը: Տէրն մեր Յիսուս, Քրիստոսն էլ (երեսը խաչակնքելով) և սուրբն Պօղոս առաքեալն էլ զբա համար ժամագրքի մէջ ասել են. «Զմի մարդ և զմի կին եղիցեն զմի մարմին»:

Վ.—(Վիրաւորւած). Լաւ է, լաւ. դու շուտ արա, գնա, մարգերդ շինիր. Աստուած անի, որ միշտ խելօք լինիս, ես էլ քո խելքի ջրերունմէն ապրեմ. (մի կողմ) կտեսնենք՝ որքս ենք անխելք:

Հ.—(Բաժակը բարձրացնելով). Հա՛, Վիրգուշ ջան, լինի՛նք միասին, սպրե՛նք միասին—ես քեզ համար, դու ինձ համար. միշտ—յաւիտեան իրար համար. քո կենացը. կուռդ տո՛ւր (կուռն անցնելով Վիրգուշի թիւր եւ քաշելով դէս ու դէն՝ ծանր խմում է եւ զլուխն օրօրում. Վիրգուշն ակամայ քաշ է գալիս նրա հետ). Օխիւ՛յ. (կուրծքը շփելով) լազգաթ. (բաժակը թրխկոցով դնելով սեղանին եւ խոր գլուխ տալով Վիրգուշին) «Պրաշ-շ՛հայ, մաղդա՛մ». (օրօրւելով դուրս է գնում երգելով) «Մնանս բարեաւ, քաղցրիկ Վիրգուշ, ես պիտի գնամ...»:

Ե ՏԵՍ.

ՎԻՐԳՈՒՇ (մենակ).

Վ.—(Ժողովելով եւ տեղաւորելով ափսնեքն ու բաժուկները). Ո՞նց չէ. կանայք անխելք են. կտեսնենք: Թէ՛ն ոչ Մասիսը Հիւսիս կդառնայ և ոչ գորտերը կթռչեն, բայց ձկները գետնից կբուսնեն և տղամարդոց խելք կսովորեցնեն, որ քիթները վեր-վեր չցցեն. երես տեցի՛նք, աստառ էլ ուզե՛-

ցիր. որքան հեզ ու խոնարհ եղանք, բաւական է. դրանց սանձը մէկ-մէկ պիտի քաշել, որ չափները ձանաչեն. ձիշտ է՝ կէնն իր մարդու մի կէսն է, բայց կնոջ աստուածն էլ իր կնն է. ու՛ Նրան դիպչի, կամ պիտի փախչի, կամ պիտի կորչի. սա մեր հաւատն է—առաջին, վերջին: (Վերցնում է մի մեղադրո՞ւմ, տախտիկ նստում ու երգում). «Երբ ալէկո՞ծ ծովի վերայ» (մի տուն): Մի քանի ժամից յետոյ երկինքը պիտի պատուի, Գաբրիէլ հրեշտակապետը փողը փչի, ձկները յարութիւն առնեն ու դատաստան նստեն, թէ՛ ո՞վ է աւելի անխելք—կի՛նը, թէ՛ տղամարդը:

Ծ ՏԵՍ.

ՎԻՐԳՈՒՇ, ՀԱՄՕ.

Հ.—(Յանկարծ ներս բնկնելով). Վիրգուշ ջան, Վիրգուշ ջան, Վիրգուշ ջան, տօ՛, մի արի, է՛, արի, արի, արի (Պեկից բռնած քաշելով). արի, է՛, տէս, է՛, հաւատա, է՛:

Վ.—(Ընդդիմաւայով, իբր վախեցած, զարմացած). Հա՛մօ ջան, էդ ի՞նչ է պատահել. հօ գժւել չէ՛ս. հանգստացիր, հոգիս, հանգստացիր, ասա, ի՞նչ է պատահել:

Հ.—(Քաշելով). Տօ՛, Վիրգուշ ջան, արի, է՛. տէս ու հաւատա, է՛. ձո՛ւկ, ձո՛ւկ. գետնից ձուկ է բուսնել:

Վ.—(Լեւիկ զարմացած). Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ, խելքդ գլխի՞դ է:

Հ.—(Ուղեւորւած, ցատկոտելով). Աստուած վկայ, Վիրգուշ ջան, էն կանաչ մեռոնը վկայ, որ ձիշտ եմ ասում. էլ դերձիկ Գրիգոր, էլ Մուղսի Գէորգ պէտք չէ. արի, ինքդ տես ու հաւատա...:

Վ.—(Խօսքը կտրելով). Ախր ինչի՞ն հաւատամ, է՛, Հա՛մօ ջան, ինչե՛ր ես բտրում...:

Հ.—Տօ՛, Վիրգուշ ջան, ձկներին հաւատա, ձկներին. հէնց հիմի որ գնացի, մարգերը փորելիս երեք հատ տոռուզ-տոռուզ ձուկը հանեցի գետնից, դեռես թրփրտում են. արի տես, է՛. ո՞վ է իմանում, դուցէ էլի կայ. (քաշում է Պեկից):

Վ.—(Ընդդիմանալով). Հանաքը դէն դիր, Համօ ջան, Դու կամ ինձ ես ձեռ առել, կամ քեզ:

Հ.—Տէր Աստուած, քեզ մեղայ. այ արի, հանաք չեմ տնում, իմ արեւը, քու արեւը վկայ, ձուկ եմ հանել գետնից, տօ, մի արի, էլի (քաշում է):

Վ.—(Ընդդիմանալով). Էն Աստուածը, Համօ ջան, դու ինձ ձեռ ես առել, ախր գետնից ձուկը կրուսնի՞, ինչէր ես առում:

Հ.—(Քաշելով). Տօ, արի, է, արի, ինքդ էլ տես:

Վ.—(Ընդդիմանալով). Համօ ջան, աչքիդ երեւցած կ'իշխի:

Հ.—(Քաշելով). Տօ, այ անաստուած, այ անհաւատ, արի, քո աչքով տես ու հաւատա, էլի:

Վ.—(Ընդդիմանալով). Ախր ի՞նչ տեսնեմ, է, ի՞նչ, ի՞նչ...

Հ.—Տօ, ձուկը, ձուկը, իսկական ձուկը, կարմրախայտ ձուկը, արի, արի, (քաշելով դուրս է տանում) արի, արի...

Վ.—Ձի լինի, չի լինի, չի լինի...

Հ.—Կ'լինի, կ'լինի, արի, արի, արի (ծայները հետզհետէ նւագում են եւ հեռանում):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր.

Բ. Գ Ո Ր Ծ Ո Յ Թ.

(Նոյն սենեակը. երեկոյ).

1 ՏԵՍ.

ՎԻՐԳՈՒՇ (մենակ).

Վ.—(Լամպը վառում է, դնում սեղանի վրայ). Տեսնենք, տեսնենք. այս երեկոյ խելքի գաղթականութիւն է կատարւելու —տղամարդկանց՝ գլխից դէպի կրունկը, իսկ կանանց՝ կրնկից դէպի գլուխը: Խեղճ իմ Համօս, ի՞նչքան ցաւում եմ. (դուրս է գնում եւ խկոյն բերում խաշած ձկները, լամպի առաջ կանգնում եւ սինու մէջ կարգով շարում). Այստեղ շարքով նստտեցէք, անուշիկ ձկներ. ձեզ աղով շոռ-շոռ խաշել եմ, որ պարծենկոտ մարդոց խելքին աղ անէք, ձեր անխօս բերանով նրանց ինքնահաւան հպարտութիւնը մի փոքր կոտրէք. (դնում է եւ մի րոպէից յետոյ գալիս՝ առանց սինու): Էնպէս տեղ դրեցի, որ սատանան էլ չի գտնիլ. Բայց մի կողմից վախում էլ եմ՝ խեղճ Համօս խելքամաղ լինի. ոչինչ, մի քիչ կ'լրատենք, որ էլ քեթը շատ ցցած չպահի: Ես Համօս շատ եմ սիրում, բայց ինձ նրանից էլ շատ եմ սիրում: Հիմա, որտեղ որ է, կգայ: (Զեռքերը դէպի երկինք). Ա՛յ սուրբ Աստուածածին, Դձու օգնես ինձ, որ դիւրս լաւ կատարեմ: Ը՛հը, գալիս է: (Զատ արագ կիրպով ամեն ինչ յարդարում է. մի ձեռագործ վերցնում, նստում է տախտին եւ լուրջ կիրպարանք ընդունում):

3 ՏԵՍ.

ՎԻՐԳՈՒՇ, ՀԱՄՕ.

Հ.—(Մտնում է պինջակը հագած, հին, բայց կոկարդաւոր ֆուրսով, ձեռքին պարան եւ էտոյ (ցաքատ), որ դնում է սենեակի

մի անկիւնում). Բարբի երեկոյ, Վիրգուշ ջան. էդ ինչպէս է, որ էլ զուտնա չես փչում:

Վ.—(Վեր է կենում). Աստծոյ բարին, Համօ ջան, ի՞նչ անեմ, հօ ամեն ըստէ չի կարելի ուրախ լինել. (վերցնում է պարսնն ու էտոյը, որ դուրս տան). սա ինչիդ է հարկաւորել, որ տարել ես:

Հ.—Վահ, դրանով ինժիներութիւն եմ արել, մարգերը պլան եմ քցել. մոռացայ իր տեղը կախել. (նստում է մի աթոռի եւ ուզում է կօշիկները հանել, բայց չի կարողանում):

Վ.—(Պարսնն ու էտոյը դուրս է տանում եւ խօսքն փերաղանում). Դու չես կարող, Համօ ջան, յոգնած ես, թո՛ղ ես հանեմ:

Հ.—Ի՞նչքան բարի ես, անուշ ջան:

Վ.—(Սկսում է ծգծգել կօշիկը եւ Համօին աթոռի հետ քաշ է տալիս առաջ). Այս ի՞նչ պնդացել է, Համօ ջան, քիչ է քնում՝ ոտդ դուրս դցեմ:

Հ.—Ձգի՛ր, մի վախենար. (Վիրգուշը ծղծղում է). իմ մարմնիս կտորները պղնձի լհեմով են իրար կպցրած, հեշտութիւնով չեն պոկ դալ, քնշիր, հը՛, ա՛յ, էղպէս. դէ, էս մի՛նն էլ, հը՛հը՛. ա՛յ, ապրե՛ս. (Վիրգուշը դուրս է տանում կօշիկները եւ դալիս: Համօն ծանր-ծանր նստում է տախտին եւ յենում մոռարին). Օ՛ֆ, յոգնեցի, ջարդուեցի. էսօր տաճուհինդ մարդ եմ շինել. ի՞նչ ուզում ես, ցանի՛ր: — Բայց էն մէկ մարդը շատ զարմանալի էր, չէ՞:

Վ.—(Ձեռադրօժը վերցնում է եւ նստում աթոռին, սեղանի մօտ). Ո՞րը:

Հ.—Էն ձկների մարդը: Վսյ, վսյ, վսյ, վսյ. ի՞նչ էլ լաւերն էլ, հ. էնպէս չի, Վիրգուշ ջան:

Վ.—(Ձարմացած նայում է նրան եւ ուսերը վեր ցնցում, հարցական դունչ անում). Հը՞...

Հ.—Տեսնում եմ, դու էլ ես զարմացել. իհարկէ, ով էլ լսի, պիտի զարմանայ:

Վ.—(Նոյն ծելով). Ինչի՞ վրայ պիտի զարմանայ. ինչե՞ր ես խօսում:

Հ.—(Պառկում է կողքի եւ յենում մոռարին). Ո՞նց թէ՛ ինչի վրայ. դա մի էնպիսի հրաշք է, որ մենակ բաղդաւոր մարդկանց կպատահի: (Պառկելով փորի վրայ). Երեւեակիր, ամբողջ մեր այգին էդ մարդի նման լինի — անսպառ աղբի՛ր. կեր ու կեր:

Վ.—(Խիստ զարմացած). Ախր ինչե՞ր, է՛:

Հ.—(Ողեւորւած). Օ՛, այն ժամանակ էնքան կհարստանամ, որ պալատների նման տներ կշինեմ, ծաղկանոց, շատուան, (հետզհետէ վեր կենալով՝ մինչեւ որ նստում է). ծառաներ, եփ ու քէփ, գետի ու ծափ: (Աւելի ողեւորւած. կանգնում է). Ես աղա կդառնամ, կսկսեմ թուղթ խաղալ. դու էլ խանրմ կդառնաս եւ կսկսես լօտօ խաղալ. (մօտենում է). յետոյ մեծ-մեծ մագ...

Վ.—(Վեր է կենում, որ դնայ). Աւելի լաւ է, որ ես գնամ, դու մի քիչ հանգստանաս:

Հ.—(Թեւից բռնելով եւ նստեցնելով իր կողքին). Լսի՛ր, Վիրգուշ ջան. մեծ-մեծ մագաղիններ բաց կանեմ, Պետերբուրգի, Մօսկովի, Վարշաւի ու զուգրանիչնի ապրանքներով կըլցնեմ. յետոյ քո անունով կհաստատեմ, կոտր կընկնեմ ֆլանքեառների նման եւ փողերը տակով կանեմ. (վեր է կենում եւ աջ մատներով չրթացնում). Դու էլ կդառնաւ խանրմ, խաթուն: (Քնքշում եւս). Ի՞նչքան էլ պառաւես, էլի՛ ջահել աղջկայ նման՝ չարղը դօշիդ, ներկը թշիդ, պոչը փեշիդ, (ծեւացնում է) էսպէս՝ շորոր-շորոր ման կգաս, կաքաւի պէս կղկղաս, (բռնում է կուր եւ պարում). Համօիդ հետ պար կըդաս:

Վ.—(Ազատւելով). Վահ, այ մարդ, քեզ ի՞նչ է պատահել, հարբած հօ չե՞ս (նստում է):

Հ.—(Մօտենալով). Ձէ, Վիրգուշ ջան, հարբած չեմ, ուրախ եմ. ամա էս իրիկուն մի լաւ պիտի հարբեմ: (Յանկարծ յիշելով). Ընչո՛ւ, ձկները խաշել ես. ախար սոված եմ,

է, տնաշէնի աղջիկ, վեր կաց, մի կտոր հաց տուր. ինչ ես նստել. շուտ արա, ձկները բեր, տեսնենք:

Վ.—(Գլուխն օրորելով եւ ծնկները տրորելով, իբր ինքն իրան). Վեշ, գինին գլուխն է ընկել. ճաշին էլ էնքան խմեց. ախ, անիծած խմիչք:

Հ.—Ճաշին չտեցիր, ասեցիր՝ իրիկունը պիտի տաս. թէկուզ՝ ճաշին էնքան կերայ ու խմեցի, ամա հիմի ձկնե-րի վրայ աւելի պիտի կոնձեմ:

Վ.—(Յուսահատ, իբր ինքն իրան). Չէ, սրա խելքը տեղը չի: Համօ ջան, ինչէր ես խօսում, ինչ ձկների մասին ես ասում:

Հ.—(Զարմացած). Վահ, հնց թէ՛ ինչ ձկներ. էն, որ բեղ տւի, բերիր տուն:

Վ.—(Աւելի զարմացած). Ե՞ս:

Հ.—Բա էս. իհարկէ՛ դու. քեզ չտւի:

Վ.—(Վրայ տալով). Ո՞վ, ի՞նչ, երբ, ճիշտը:

Հ.—(Նոյնպէս). Ե՛ս, ձկներ, էսօր, մարդի մօտ:

Վ.—Ի՞նչ է ասում:

Հ.—(Կանգնելով նրա դիմացը). Ա՛սում եմ, էլի:

Վ.—Տէր ողորմած Սստած. հնց թէ՛ ասում եմ, էլի:

Հ.—Հանաք ես անում:

Վ.—(Խիստ զարմանքով եւ լուրջ). Իսկի էլ հանաք չեմ անում:

Հ.— Իմ անքը՝ հանաք ես անում:

Վ.—Քու անքը՝ հանաք չեմ անում:

Հ.—Էն Ա՛ստածը՝ հանաք ես անում:

Վ.—Էն Ա՛ստածը՝ հանաք չեմ անում:

Հ.—Ճիշտ:

Վ.—Ճիշտ:

Հ.—(Բոլորովին մօտենալով, աչքերը չոտ). Ա՛յ ախի, ես խելագար եմ:

Վ.—Չգիտեմ:

Հ.—Ո՞նց թէ՛ չգիտեմ:

Վ.—Չգիտեմ, էլի. դու տարօրինակ բաներ ես խօսում:

Հ.—Ա՛յ ախի, ես առաւօտը տուն եկա՞յ:

Վ.—Եկար:

Հ.—Դու էստեղ երգում էիր:

Վ.—Երգում էի:

Հ.—Մենք խօսեցինք:

Վ.—Խօսեցինք:

Հ.—Մենք երկար վիճեցինք:

Վ.—Վիճեցինք:

Հ.—Կանանց խելքի, այսինքն, չէ, նրանց անխելքու-թեան մասին:

Վ.—Լաւ:

Հ.—Դու էլ ինձ հակառակեցիր:

Վ.—Է՛:

Հ.—Է՛, ու ջան:

Վ.—Յետոյ:

Հ.—Յետոյ ես հաց կերա՞յ:

Վ.—Կարճ կտրի՛ր՝ կերար, գնացիր մարդդ փորելու, հիմա էլ եկել ես:

Հ.—(Ցուցամատը բարձրացնելով. ծանր). Չէ, խնդրեմ նե-րեւ. կրակ չտաս էրես, մէջ տեղը բան ես բաց թողնում:

Վ.—(Ուսերը վեր քաշելով). Ի՞նչ:

Հ.—Չհուր քու պինչ. (վանկիրով). Էն, որ մարդը փորելիս ես վեց հատ լաւ, թխլիկ ձկներ գտայ հողի միջից, քեզ կանչեցի, թրպրտալէն ածեցի գոգնոցիդ փէշն ու դու էլ, պար զալով եկար տուն, որ իրիկւան համար խաշես, ու-տենք, հասկացար:


Վ.—Ա՛յ մարդ, երազ ես տեսիլ:

Հ.—Ո՞նց թէ՛ երազ:

Վ.—Երազ, էլի. ախ դու ինձ երբ ես ձուկ տւել:

Հ.—(Մաստիկ զարմացած). Վահ, հնց թէ՛. տօ, առաւօտը չաւեցի:

Վ.—Ո՞ր առաւօտը:



59740-66

Հ.—Տօ, քնոյ տառաւոր:

Վ.—Ո՞րտեղ:

Հ.—Վահ, մեր մարգերի մօտ:

Վ.—Ո՞ւր:

Հ.—Տօ, քեզ, քեզ, քեզ. դու էլ չտեսնիր:

Վ.—Ի՞նչ, ի՞նչ:

Հ.—Վահ, հնց թէ՛ ինչ, ինչ. տօ, ձկներ, վեց հատ կարմրախայտ:

Վ.—Այ մարդ, էն Աստուածը՝ դու ինձ ձեռն ես առել:

Հ.—Իսկի էլ չէ. տօ, դու քո աչքով չտեսնիր:

Վ.—Չէ:

Հ.—Չէ:

Վ.—Չէ:

Հ.—Չէ:

Վ.—Չէ, չէ ու չէ:

Հ.—Տէր ողորմած Աստուած. այ, ախչի, դու ինքդ չտեսնիր:

Վ.—(Թաշկիմանն աչքերը տանկով. կեղծ լացով). Չէ, ասում եմ, էլի. ինչու էս ինձ վախեցնում:

Հ.—(Երեսը խաչակնքելով). Տէր, քեզ մեղայ. այ, ախչի, մարգի հողից հանած ձկները դու չքերի՞ր տուն:

Վ.—(Լացով). Եանի ուզում ես ինձ սպանել. չէ, ասում եմ, էլի. ախր էդ ի՞նչպէս կլինի, որ հողից ձկներ բուսնեն. նրանք հօ խէզ չեն, գորտ չին, որ հողի մէջ անջուր ապրեն:

Հ.—(Խիստ ապշած). Տօ, դու ինքդ չպատմեցի՞ր, որ քու քեռուհն քաղմանը՝ Թարխունի տեղ քանդելիս՝ ութ-իննը կարմրախայտ է հանել մարգից:

Վ.—Տէր Աստուած, ախր էդպիսի յիմար խօսք ես հնց կասեմ, և թվ կհաւատայ:

Հ.—Տօ, դերձակ Գրիգորի տղայ Սուրենն էլ՝ քալամ ջրելիս՝ հինգ հատ կարմրախայտ չի հանել գետնից:

Վ.—Բան ասա, բանի նման լինի. դերձակները բոլորն էլ լաւ փշողներ են:

Հ.—Ախլի ես, դերձակների պէս էլ ճշմարտախօս մարդիկ չկան. վերջապէս՝ չէ՞ որ ձեր խնամի Սուրբ Գեորգն էլ տեսել է ու ինքն էլ կերել:

Վ.—Հա, մին էլ էն պտերի տոպրակ անդէսը:

Հ.—Չարաչար սխալում ես, նա շատ աղնիւ և սուրը մարդ է. նա տեսել է, և դու էլ ասեցիր:

Վ.—Ես այդպիսի բան չեմ ասել:

Հ.—Դէ, երգելի:

Վ.—Երգում եմ:

Հ.—Ասա—էն մեռոնը՝ չեմ ասել:

Վ.—Էն մեռոնը՝ չեմ ասել. (մի կողմ). մեղմ, Աստուծոյ:

Հ.—Ասա — էն Սուրբ Սարգիսը, էն Սուրբ Գեորգը՝ ձկները չեմ տեսել:

Վ.—Էն Սուրբ Սարգիսը, էն Սուրբ Գեորգը, Աստուած, երկինք, զեպինք՝ չեմ տեսել. (մի կողմ). Տէր Աստուած, Դու ոչ լսես:

Հ.—Ես թող գտնեմ ձկները և քո աչքերը հանեմ: (նալում է դէս ու դէն. դնում է միւս սենեակը, յետ դալիս):

Վ.—(Քմծիծաղ. մի կողմ). Բարով գտնես:

Հ.—(Բարկացած ման է գալիս, ուսերը վեր վեր ցնցում, կանգնում, աչքերը չռում, հարցական ձեւեր անում). Հը՞, ճիշտ է ասում. (ինքն իրեն շօշափում է). երազումն եմ, քնած եմ. (աչքերը տրորում է. զայրացած). տօ, հնց թէ քնած. ես քեզ երազ ցոյց կտամ (յարձակում է վիրողւշի վրայ). ասա, թուր էն ձկները:

Վ.—(Վախեցած ճշում է եւ յետ-յետ փախչում). Հա, էդ էր պակաս մեր գլխից. չեմ ամաչում:

Հ.—(Իրեն զսպելով եւ կանգնելով վիրողւշի դիմացը). Այ ախչի, արի, քարը գողցող վէր ածա. ինձ մի կատաղեցնիր. ես երեխայ չեմ, հարբած չեմ, խելագար չեմ, ճիշտն ասա:

Վ.—(Մաստիկ յուզմունքով). Բա ես երեխայ եմ, հարբած

հմ, խելագար եմ. ճիշտն եմ ասուի, էլի՜ ի՞նչ անեմ, որ
դու անհաւատ ես դարձել:

Հ.—(Գրողւած բռնում է նրա կոնից). Ծիշտն ասան, հօր ես
ձկները:

Վ.—(Կուռը յետ խելով). Ծիշտ եմ ասում, չեմ տեսել:

Հ.—(Նորից բռնելով եւ թափ տալով). Ասում եմ՝ ճիշտն ասան:

Վ.—(Ազատւելով եւ յետ քաշւելով). Վա՛հ, ի՞նչ կոպիտն ես,
ասում եմ, էլի, չեմ տեսել, չեմ տեսել:

Հ.—(Նորից բռնելով եւ դէս ու դէն քաշքշելով). Ասում եմ՝
ճիշտն ասան, հասկանում ես. (ատամները սղմած). ճիշտն ասան,
ճիշտն ասան, թէ չէ...

Վ.—(Լացով). Ո՛ւֆ, ո՛ւֆ, ո՛ւֆ, կուռս կուտրւեց. (հրկով
Համօին). կորիւր, անգուլթ, անխիղճ, հարբած (փախչում է մի
անկիւն):

Հ.—(Սաստիկ դայրացած). Տօ, դու ինձ երեխի տեղ ես
դրել, թէ՛ ի՞նչ է. (յարծակւելով). ես քո ոսկորները կջարդեմ.
դէ՛, ճիշտն ասան, թէ չէ, կսպանեմ (խփում է):

Վ.—(ձգում է). Վա՛յ, վա՛յ, անասուած, ի՞նչ ես անում,
ես մեղք չեմ:

Հ.—(Յարծակւելով). Ձայնդ կտրիւր, անգգամ:

Վ.—(Գուռս է փախչում եւ ձգում). Վա՛յ, վա՛յ, օգնեցէք, ուստան
Դաւիթ, հասէք, սպանեց:

Հ.—(Նրա յետեւից վազելով եւ ներս բերելով). Լո՛ւր, անըզ-
գամ, ամօթ է, լո՛ւր, լո՛ւր:

Վ.—(Գուռս է փախչում եւ ձգում). Վա՛յ, հասէք, սպանեց,
սպանեց, ուստան Դաւիթ, օգնեցէք:

Հ.—(Նտեւից գնում, քաշելով ներս է բերում եւ տախտի վրայ
նստեցնում ու կոնքի վրայից գրկում. Վիրգուշը շարունակ ձգում է:
Համօն ձեռքով նրա բերանը փակում է). Լո՛ւր, լո՛ւր, անգգամ,
լո՛ւր, ձայնդ քեզ քաշիր, ամօթ ունեցիր, լո՛ւր, լո՛ւր:

Վ.—(Սաստիկ լացով). Ա՛նասուած, անխիղճ, անգո՛ւթ,
մարդասպան, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ:

3 ՏԵՍ.

ՆՐԱՆՔ ԵՒ ԴՍԻԻԹ.

ԴՍԻԻԹ.—(Փարտաշի զոգնոց կապած, մուրճը ձեռին՝ հեւալով
մտնում է). Հը՛, էս ի՞նչ շամաթա է, Համօ ախպէր, էդ ի՞նչ
կէնեա (մօտնում է, նրան ետ քաշում ու մէջտեղ կանգնում):

Հ.—(Նստ է կանգնում, բարկութիւնից սաստիկ հեռում եւ խէթ-
խէթ նայում Վիրգուշին). Անգգամ, վերջն էս օրին էլ հասցրիր
և մեր անունը խայտառակեցիր:

Դ.—Համաթ չէ, ախպէր Համօ, մենք խօս օտար չենք,
մէ ըսէք. տեսնիմ, ի՞նչ է:

Հ.—(Վիրգուշին). Ա՛նամօթ:

Վ.—(Լալով). Դեռ խօսում էլ ես, մարդասպան:

Դ.—(Նայում է մէկ սրան, մէկ նրան). Տէ՛ր օղորմած Աստ-
ւած:

Հ.—(Վիրգուշին). Ձայնդ կտրիւր, յիմարի գլուխ (ուզում է
յարծակւել):

Դ.—(Արդիւնով). Համօ, ամենչի՛, դու տղամարդ ես, էնիկ
օղլուշաղ է:

Վ.—(Լացով). Ո՛ւստա Դաւիթ, օգնիր ինձ, ի սէր Աս-
տուծոյ, ազատիր մահից, սա էսօր խելքը կորցրել է:

Հ.—(Աչքերը ոլորելով). Դեռ երես էլ ունի խօսելու:

Դ.—Ախր մէ ըսէք, տեսնիմ ի՞նչ ունիք բաժնելու, օր
չէք կրնայ. տէյ յէսօր եղ ու մեղրի պէս կապրէիք
ու հիմի շուն ու կատու էք դառն:

Վ.—(Լացով). Ես ի՞նչ գիտեմ, իրեն հարցուր:

Դ.—Դէ, խօսի, Համօ ջան, էդ ի՞նչ է էղել, օր էդ-
պէս կրակ ես կըզրէ:

Հ.—(Խէթ-խէթ նայելով Վիրգուշին եւ բարկութիւնից դողալով).
Ո՛ւստա Դաւիթ, դու մեր մօտիկ հարեանն ես, մեր աչքի
լոյս ախպէրն ես:

Դ.—(Գլուխը շարժելով). Հըլըլթ, հըլըլթ:

Հ.—Խնդրում եմ՝ դու արդար դատ անես իմ ե՛ս, էս,

էս անգգամի մէջ:

Վ.—(Թաշկինակով արքերն ու քիթը սրբելով). Այո, թող անի
և մեղաւորի աչքն էլ հանի:

Դ.—Ձէ, քոյրիկ, աչքը չեմ հրնա հանէ, հըմբ արդար
դատ քնէլը՝ պարտքըս:

Հ.—(Խորը շունչ փաշկով). Ա՛յ անպէ՛ք, էսօր առաւօտեան
ես մեր մարդերը շինելիս...

Վ.—(Կրա խօսքը կտրելով). Ո՛ւստա, լաւ լսիր քո սէք Աս-
տուծոյ:

Հ.—(Վ-ին). Դու ձայնդ հտրելի. (Դ-ին). մեր մարդերը
փորելիս հողի միջից յանկարծ մի ձուկ դուրս քնկաւ,
սկսեց թրպրտալ. զարմացած վերցրեցի:

Դ.—(Խիստ զարմացած). Է՛, յետե՛:

Հ.—Յետոյ, էլի փորեցի, երկրորդը դուրս եկաւ, էլի
փորեցի՝ երրորդը, չորրորդը, մէկմէկից լաւ, թխիկ:

Վ.—Հա, հողի միջից՝ ձուկ:

Հ.—Պապանձւիր, գոնէ էս մարդից քաշւիր:

Դ.—(Վախկցած նայելով նրան). Յետե՛, յետե՛:

Հ.—(Խորը շնչելով եւ ծուրը կու տալով). Յետոյ եկայ տուն,
էս անգգամին պարայ, որ իր աչքով տեսնի. կհաւ, տե-
սաւ, շատ ուրախացաւ:

Դ.—Դիւ էլ տեսար, քոյրիկ:

Վ.—Ասում է, էլի. էդպէս բան կլինի:

Հ.—Ո՛ւստա, դու նրան ինչո՞ւ ես հարցնում, նա էսօր
կատաղել է:

Դ.—(Մի կողմ). Խեղճ Համօ. (բարձր). պատմէ, պատմէ:

Հ.—Էլի փորեցի, էլի ձկներ. վերջը վեց հատ թաղա-
թաղա ձկներ դուրս եկան, բոլորն էլ կարմրախայտ:

Վ.—Ո՛ւստա, լսում ես:

Դ.—(Հառաչելով). Ի՜նչըդ չէ, ի՜նչըդ չէ. (մի կողմ). Խեղճ
մարդ, խեղճ Համօ:

Հ.—(Չայրանալով Վ-ին). Դու պոչատ դռակի պէս մեջ մի
քնկնիր. (Դ-ին). Յետոյ ձկները լցրեցի արա գոգնոցի փէշը

և տեցի, որ իրիկեան համար լաւ խաշի, ուտենք:

Վ.—(Հեկեկալով). Հիմի էլ եկել, ինձ ուզում է սպանել,
թէ՛ ձուկ բեր, ուտեմ: Ո՛ւստա, էն Աստուածը, սուս է,
երազ է տեսել, կամ աչքին է երևացել:

Հ.—(Չայրացած). Չայնդ, յիմար, թէ չէ (յարձակելով)
գլխես, ինչ կանամ:

Դ.—(Երկնադով նրան բռնելով). Համօ ջան, խելքի արի, էդ
ի՜նչըդ բաներ կպատմես. ախր չոր գետնէն ձուկն
ի՜նչըդ պըտի յիշնի, որ էս հրեշտակի պէս անմեղ գառին
կչարչրես:

Հ.—Վնէ, հնց թէ, ուրիմն ես խաբում եմ:

Դ.—Հա, Համօ ջան.. կամ էրազ ես տեսել, կամ աչքե-
րուդ է երևցել. թէ չէ՛ հո՛ղ—ձո՛ւկ... հէ՛չ էղնելու բան չէ:

Հ.—(Տաքանալով). Տօ, հնց թէ չի լինի. բա ես սուս եմ
ասո՞ւմ. լաւ, ասե՛նք, թէ դու չես տեսել (յարձակելով). բա
էս անգգամս էլ չի տեսել:

Վ.—(Ճշալով ու դողալով). Վայ, ուստա ջան, մի թողնիր,
թէ չէ՛ ինձ կսպանին:

Դ.—(Մուրճը մի կողմ դնելով եւ բռնելով Հ-ի երկու ծնոքը).
Համօ, խելքդ գլօխդ ժողւէ, թէ չէ՛ հաւանտս վկայ, պօղի-
ցին յիմաց կուտամ:

Հ.—Վա՛հ, դու է՛լ, իմ տանը՞, ի՜նձ (հրելով նրան). դէ,
դուրս, դուրս իմ տնից:

Դ.—Է՛հ, ըլտը, ահա-մակաս, էդիկ էր պակաս. (տմուր
գրկելով նրան կոնների վրայից). հիմի ես քեզի կսորվեց-
նեմ, թէ ինչ է ըսել՝ դժուրս իմ տնէն (կամենում է սրտովիցնել
տախտին). հը՞, մէկէլ կըսես:

Հ.—(Թափահարելով եւ ազատելով). Տօ, դու էլ ես դժւել,
էս սարսաղի խելքով ընկել. (իրեն ուղղելով). դուք երկուսդ
էլ խելագար էք և ինձ էք խելագար համարում. (յարձակ-
ւում է երկսի վրայ էլ). դժուրս, դժուրս իմ տնից:

Վ.—(Ճշալով անցնում է Դ-ի ստիւնը). Ո՛ւստա, բռնիր, մեղք
է, բռնիր, մի թողնիր:

Հ.—(Յարձակելով)։ Ը՛ր՛ը՛ր՛. ես քեզ՝ մի թողնի՛ր՝ ցոյց կտամ։

Դ.—(Նորից պինդ գրկելով նրան)։ Նա կըսեմ խաթրով խելքի գաս, թէ չէ ուժով ընձի չես կրնայ յաղթէ։

Հ.—(Ելխատելով դուրս արձնել)։ Թող, ասում եմ, թող, թող։

Դ.—Տը մէ լաւըմ աշէ, ես վէ՛վ եմ. ընձի Սատանա-Պապօ-յենց քարտաշ Դաւիթ կըսեն. մինչև չխելօքնաս, չեմ թողնի։ (Համօն կծում է նրա ականջը)։ Օ՛խ, գաղան, էս ի՞նչ էրիբ, խելըռար, ի՞նչ է, օր յանկաջըս կխածեն. (Վ-ին) քոյրիկ, մէ չւանըմ բեր։

Վ.—(Շտապով բերում է պարանոց)։ Ո՛ւստա, կապիր ի սէր Աստուծոյ, թէ չէ՛ իրեն էլ կիլասի, մեղ էլ։

Հ.—(Սասիկ ջղածգորէն)։ Տօ, հնց թէ կապել, գժեւ էք, ի՞նչ է. թողէք, ես ձեզ ցոյց կտամ, խելագարնե՛ր...

Վ.—(Պարանոց օղ է անում, ձգում Համօի կոնքին եւ քաշում)։ Ո՛ւստա, պի՛նդ կապիր, որ չբացւի. մեղք է. իրեն կիլասի։

Դ.—(Հին գործում է տախտի վրայ, ձեռներն ու ոտները պինդ կապտում. նա գոռում է, ծղծղում, թափահարում—ինքն իրեն կորցրած, վերջը՝ բազմաթիւ ջանքերից յետոյ՝ բոլորովին խաղաղում է եւ չոած աչքերով նայում մէկ Վ-ին, մէկ Դ-ին)։ Հը՛, հիմի խելօքցար, մարգերուդ մէջը էլ ձուկ չիս բուսնեցնէ։

Հ.—(Լո՛ւռ նայում է սրան-նրան, ոչինչ չի պատասխանում, միայն երբեմն հառաչում է եւ տնքում)։

Դ.—Բոյրիկ, քիչմ պաղ ջուր բեր, յերեսը, ճակատը շփէ, տեսնինք՝ ի՞նչըդ կեղնի. ես էրթամ, էն մեր հէքիմ-գրբաց Սեդրոսին կանչեմ, բալքի մէ ճարըմ էնէ։ (Երկուսն էլ գնում են)։

Հ.—(ձնջալով)։ Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ։

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Թ.

Վ. Գ Ո Ր Ծ Ո Յ Թ.

1 ՏԵՍ.

ՀԱՄԾ, ՎԻՐԳՈՒՇ.

Հ.—(Տնքում է)։ Ո՛ւֆ, սէֆ։

Վ.—(Բերում է ափսէով ջուր եւ քաթն, նստում է տախտի մօտ՝ աթոռին)։ Ի՞նչպէս ես, Համօ ջան. ախր ես քեզ ասեցի՛ շատ մի խմիր, դու ինձ չլսեցիր. առաւօտը խմածդ հերիք չէր, ճաշին էլ այնքան խմեցիր, որ աչքերիդ բանըման երևաց։

Հ.—(Տնքում է)։ Ո՛ւֆ։

Վ.—(Ափսէն աթոռին է դնում, ինքը չորում եւ գրկում Հ-ին)։ Ի՞նչ է, անհւշ ջան, եթէ հանգստացել ես, պարանը բաց անեմ, ազատ նստիր։

Հ.—(Թոյլ ծայնով)։ Չէ, չէ, չէ, չէ. ես էլի լաւ չիմ համողած, թէ աչքիս են երևացել էն զահրումար ձկները. վայ թէ՛ բաց անես, էլի քեզ ծեծեմ. թող՝ մի քիչ էլ համողեմ։

Վ.—(Քաթանով ջուր է քսում նրա երեսին, ծախտին եւ սրբի-լով սրբում)։ Մա քեզ կհանգստացնի, Համօ ջան, աղիդ ջան, մինչև որ ուստա Դաւիթն էն հէքիմ-գրբաց Սեդրոսին կբերի. ասում են՝ նա վարդապետ է եւ հրաշագործ բժիշկ. նա շատ տեղեր է ման եկել, շատերին է բժշկել. մինչև անգամ միռիչներ է կենդանացրել իր աղօթքներով։

Հ.—(Թոյլ ծայնով)։ Վերգուշ ջան, կոներիս պարանը քիչ թուլացուր. ձախ կուռս բաց արա. իսկ աջ կուռս եւ ոտերս թող՝ կապած մնան.—վայ թէ փախչեմ. Ի՞նչ փորձանք էր, Տէր Աստուծ։

Վ.—(Թուլացնում է. ինքն իրան)։ Չէ, կակողում է. փրկու-թիւնը մօտ է։ (Հին քնքունթիամբ գրկելով եւ փախալով)։ Մի

վախենար, անսուշ ջան, ամեն ինչ կանցնի. միշտ փութոր-
կից յետոյ աւելի գեղեցիկ եղանակ է բացուում: (Դուրս ծե-
ծում են). Ահա, երեւի ուստա Դաւիթն է, հէքեմին է բերել.
(մօտենալով դռան եւ բանալով). համեցէք (զնում է):

2 ՏԵՍ.

ՀԱՄՕ, ԴԱԻԻԹ, ՍԵՂԲՈՍ.

ՍԵՂԲՈՍ.—(Դանդաղ քայլերով ներս է դալիս, միշտ ակնոցի
վերեւից առաջ նայելով. առանց Հ-ին նկատելու՝ համնում է սենսակի
մէջտեղը եւ դանդաղօրէն դառնում հակառակ կողմը՝ ետեւով դէպի
Համօն. շարունակ գցում է երկար եւ մեծահատ տէրողորմեան եւ
շարունակ կրկնում.—մեղայ Բեզ, Տէր). Ո՞ւր է տկարացեալ,
դիւահարեալն:

Դ.—Աղա դօխտուր, ըշտը էսիկ է մեր հիւանդը:

Ս.—(Դանդաղօրէն շրջւում է Հ-ի կողմը, որ խղճալի տեսքով
միշտ նայում է իւրաքանչիւր խօսողի կողմը). Ահա, բայց ինչո՞ւ
այդչափ կապկապեր էք:

Դ.—Հոգեւոր դուրբան, աղա դօխտուր, ըշտը էնքան չա-
րութէն էրաւ օր, էլ դու պրծար. քիչ էր ֆնացել, օր իրան
օղլուշադին սրւլանէր, ընձի էլ խեղդէր. էրկուսով անջախ
կըրցանք կապել. դեռ հըլը յանկաջս էլ մէ լաւըմ խածեց:

Ս.—Մեղայ Բեզ, Տէր. նախքան հիւանդութիւնն ի՞նչ
պատճառներ կան դիւահարութեան:

Դ.—Ըշտը, աղա դօխտուր, հէչ պատճառըմ էլ չկայ.
մեր ուսումարանի վարժապետն է. հիմի պրագնիկ է. պա-
րապ է. էրկու-յիրեք օր մարգեր կփորէր. յեսօր էլ տաք-
տեղի մարզ շինելուս յաչքերուն վեց հատ ձուկ է էրկցել՝
գետնէն դուս ցցւած. հայ-հարայ վազգել է տուն, օղլու-
ջադին ծեծել, թէ թէք էրա, ձկները խաշէ, ուտեմ. հըլը
լաւ էր, օր ես գործի տեղէն կուգայի, կնկայ հաւարը յի-
մացայ, էկայ, օղլումից պրծուցի:

Ս.—Մեղայ Բեզ, Տէր, որեւէ անձի հետ կոխ արած կնի
հիւանդն:

Դ.—Ձէ, հէչ կուած չկայ. ինքը շատ բարի սիրտ ունի:

Վ.—(Դռան ետեւից լսելով եւ իսկոյն մտնելով). Այո, պարհն
բժիշկ, կուել է հոգաբարձուների և քահանայի հետ, որով-
հետեւ սրանք...

Ս.—(Իսկոյն երեսը շրջում է միւս կողմ, ծախ ձեռքը դնում իր
զլխին՝ զխարկի վրայից, իսկ աջով արագօրէն տէրողորմեան գցում.
Դաւիթը նոյնն է անում եւ իր զոգնոցով ծածկում զլուխը. Վիրգու-
շը զարմացած, ստուռ է իր տեղում). Մեղայ Բեզ, Տէր, հրա-
ժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա,
հրաժարելով հրաժարիմք: (Ասելով դառնում է, նայում Վ-ին եւ
նորից կրկնում):

Վ.—(Ինքն իրեն). Սատանան դու ես, խաբէբայ գրող:

Դ.—Աղա դօխտուր, սատանա չէ, հիւընդի օղլուշադն
է. շատ էլ աղնւական հոգի ու սիրտ ունի:

Ս.—(Դանդաղօրէն յետ դառնալով). Մեղայ Բեզ, Տէր. և
դառնամք ի լոյս ճշմարիտ աստուածգիտութեան. ո՞վ է այս
գեղանի փորձիչն:

Դ.—Աղա դօխտուր, ըշտը հիւընդի օղլուշադն է:

Ս.—Մեղայ Բեզ, Տէր. (Մօտենում է Վ-ին եւ հանգցնելու
ձեւով փչում երեսին). փոհ, փոհ, փոհ. փախի՛ր չարէն,
դուստր եւայի, և մախի՛ր ուրախութիւն տեառն քո (տէրո-
ղորմեայի հատիկները գցում է, զլուխը տմբոմբացնում եւ նայում
Վ-ին).

Վ.—(Քիթը բռնած. մի կողմ). Փիւֆ, արադի հոտ է փչում:

Հ.—(Հատուցում է). Ա՛խ, ա՛խ:

Վ.—(Մօտենում է). Համօ ջան, հիմա ո՞նց ես. ախր ա-
սում եմ՝ էդքան արադ մի՛ խմի՛ր, կհարբե՛ս, դու ինձ չես
լսում:

Դ.—Էհէ, հիմի հապկցայ, ըսել է՝ ըսել է իմել եւ
հարբել. էն էլ յառաւօտուն, սարախտան խմելը շատ զէշ
բան է. ընձի էրկու անգամ պատահաւ. մաղ էր ֆնացէ՛

մեռնէի. կժերով ջուր են թափէ վրէս, բօլ էլ քօթկել են հարիֆի տղէքը—նոր եմ ուշքի էկէ. հըմը ընձի հարցմը հէջ խաբար եմ հղէ—մեղմյ Աստձու. հիմի Համօինս է:

Ս.—Յոյժ մոլորեալ ես և սխալ. օղին և գինին մարդուն փնաս չին տար, եթէ աղօթքով և (աչքերը երկինք) Աստուծոյ անուն տալով խմեն՝ թէկուզ կժերով:

Վ.—(Հիւյ Ռեոանալով). Արաղի վրայ դեռ գինի էլ խմեց:

Դ.—Ի՞նչ կըսես, էդ խօ օլումի դունէն է ետ դարձէ, ես իմ Աստուած, բախին ու գինին յիրար քով—ինչը թէ՛ յարջն ու գէլը՝ ջալի մէջ. էլի լաւ է պրծէ, էն եօթվէրք Սուրբ Աստուածաձինը վկայ:

Ս.—Մեղմյ Քեզ, Տէր, դարձեալ մոլորեալ ես. օղին և գինին՝ միտեղ, միասին—որպէս այր և կին՝ ուխտեալ ամուսին. նոքա կուտան մեզ արիւն և եռանդ, ուր՝ օղի, գինի, Աստուած է և անդ. մեղմյ Քեզ, Տէր:

Վ.—Հազար անգամ ասեցի՝ մի խմիր, չեղաւ. դեռ ինձ էլ էր ստիպում, որ խմեմ:

Դ.—Հմ, ըշտը շատ դօռ բան կեղնէր. յիրարու կուտէ՛իր, էլի լաւ է, օր դու խելօք ես ֆնացէ:

Ս.—Մեղմյ Քեզ, Տէր. անսահման հեռի ես ճշմարտութենէն. —կռիւ, պատերազմ այնտեղ կծագէ, ուր մէկն անմիտ, միւսն խելօք է: Սակայն՝ երբ ամենք լինին խելագար, միշտ սիրով կապրեն, հաշտ, եղբայրաբար. մեղմյ Քեզ, Տէր:

Հ.—(Աստիկ կտորաւելով). Ո՛ւֆ, ո՛ւֆ:

Վ.—(Մօտ է վազում). Ի՞նչ է, Հմօ ջան, կուզես՝ կըռներդ բաց անեմ:

Ս.—(Աջ ձեռքը բարձրացնելով. հանդիսաւոր). Ո՛չ. հասեալ է ժամ. (հատ-հատ. բարձր). Հիւանդ Հմօ, դու դիւահմար ես, եօթն չար դեեր զարկեր են դրեղ. (ծոցիւ հանում է մի ձին աղօթագիրք, ծախով բռնում եւ իբր կարդում, իսկ աջով շարունակ տէրորում եւ զգում):

Առաջին՝ Պարագութեան դէն չար,
Տօներու ջերմ սիրահար.
Ամուսնութեան հակառակ,
Բայց՝ բազմակին, անսուակ. Մեղմյ Քեզ, Տէր:

Երկրորդ՝ Կեղծաւոր դէն անամօթ,
Միշտ քծնող ամենու մօտ.
Աղէս է, բայց՝ հաւարած.
Դայլ է, բայց՝ և գառնարած. մեղմյ Քեզ, Տէր:

Երրորդ՝ Կարմրաքիթ դէն տակառ,
Պիղծ ոճրագործ, խելագար,
Մերթ հովիւ, մերթ դաստիարակ,
Կամ՝ խաղամոլ խայտառակ. մեղմյ Քեզ, Տէր:

Չորրորդ՝ Այն զրպարտիչ, ստախօս
Դէն մատնիչ, շահմար օձ.
Խօսքն անոյշ՝ «հողի ջան»,
Բայց՝ սրտով նենգ, դաւաճան. մեղմյ Քեզ, Տէր:

Հինգերորդ՝ Ագահ դէն մարդակեր,
Սրիկայից միշտ ընկեր.
Ազատախօս քարոզիչ,
Գրպանահատ կեղեքիչ. մեղմյ Քեզ, Տէր:

Վեցերորդ՝ Կաշառակեր դէն գող,
Ատենապետ և կնքող.
Մերթ՝ գործակար, քարտուղար,
Մերթ՝ փաստաբան, դատավար. մեղմյ Քեզ, Տէր:

Եօթներորդ՝ Դէն դահիճ բռնակալ,
Ուխտադրուժ, ոխակալ.
Կոյր առաջնորդ և խոժոռ,
Հողին վախկոտ և ստոր. մեղմյ Քեզ, Տէր:

(Քիչ արագ). Դուրսը՝ խոնարհ գառն է հեզ,
Ներսը՝ ցուլ է, վայրի եզ.

Հօտի գլխուն պատուհաս,

Խաղով, գինով մոլեգնած.

Աղնիւ մարդոց՝ թշնամի,

«Թեթեւ» կանանց՝ խնամի.

Թոյլերու դէմ՝ ահաւոր.

Ուժեղին՝ սպասաւոր.

Նա՛ և՛ խարդախ, խաբերսյ.

Նա՛ փառամբլ աներկրայ:

Մեղայ Գեղ, Տէր, մեղայ Գեղ, Տէր:

Դ.—(Միշտ էլ Ս-ի հետ կրկնում է). Մեղայ Աստըձու:

Վ.—(Քսթիծաղ). Այդ ի՞նչ շատ դեհեր են հաւաքուել խեղճ
Համօխ գլխին:

Ս.—(Տէրողորմեան գցում է Վ-ի վրիզը). Ա՛ն զօրութիւն՝
հալածել զդուս:

Վ.—(Սաստիկ ուրախացած). Ուրեմն, պարոն բժիշկ, հիմա
ես էլ կարող եմ դեհերին հալածել, ի՞նչ լաւ եղաւ:

Ս.—Մեղայ Գեղ, Տէր, զի՞ փորձես զիս, կեղծաւոր:
Գնա և բեր՝ աղ, ածուխ, սխտոր, նաև ժանգոտ մեխ և ծու
մի կլոր:

Վ.—Ա՛յս բոպէիս. (Գնում է):

Դ.—(Գլուխն օրօրելով). Գտակ ծածկող տղամարդն էս
տեսակ օղլուշաղի խաթրին դիպնի: Աստըձու անմեղ գառն
է. ի՞նչքան էլ սիրէ կը էս խելըսին:

Ս.—Մեղայ Գեղ, Տէր. եօթն դեհերն հալածելու համար
հարկաւոր են եօթն իրք—անդ, ածուխ, սխտոր, ժանգոտ
մեխ, կլոր ձոն, դանակ և աղօթագիրք:

Վ.—(Բերում է). Ահա, պարոն բժիշկ:

Ս.—(Վերցնում է մէկ-մէկ, նայելով Վ-ի երեսին. իրերը շարում
է տախտի վրայ Հ-ի շուրջը, ծոցից հանում է մի երկայն դանակ եւ
սկսում է աղօթք մըմնջալ. դանակով շարունակ տփտփում է կամ
իրերից մէկն ու մէկը, կամ Հ-ի մարմնի զանազան տեղերը. յաճախ
էլ լայն բերանով եւ ծորուն ծայնով յօրանջում է եւ Թեթեւ Թրոտում
Հ-ի երեսին: Քիչ յետոյ բարձր ձայնով ասում է հատ-հատ. միեւնոյն

ժամանակ շարունակում է միւս պործողութիւնները):

Անամ իստի, անամ ինդի, անամ Յիսուսի, անամ Քրիստոսի.
Տեղնը տեղին, Թամփանոսին, տախտէջին, կապուտ քարին.
Կապուտ քարը կանաչ ծառին, կանաչ ծառը սևին-փուշին.
Սև օձը կթեմ, մածունը մերեմ, թեփը կթեմ, թեփը ուտեմ.
Չար աչքին, չար նիւթին, չար օրին, չար սհաթին,
Չար դեհին, չար սատանին,—թաւ, ես թքեմ, դաւ չքէ.

(Յանկարծ Թրում է Համօի երեսին, ապտակում, շրջում եւ
շարունակում մըմնջալ).

Հ.—(Սաստիկ ցնցում է). Ո՛ւՖ, ո՛ւՖ:

Ս.—(Նոյն դիրքում). Աման մի ջո՛ւր:

Վ.—(Գնում է եւ բերում). Ահա, պարոն բժիշկ.

Ս.—(Բոլոր իրերը մէկ-մէկ վերցնում, մի անգամ շուտ է տա-
լիս Հ-ի գլխով եւ գցում ամանի մէջ. իսկ աղը՝ երեք անգամ շուտ
տալով եւ յօրանջելով ու Թրոտելով՝ լցնում է լամպի բոցի վրայ.
ապա դանակով խոտնում է ամանը, զրքով խոսակնրում եւ՝ աչքերը
երկինք յառած՝ աղօթք մըմնջում, իսկ ամանը տալիս Դամին).
Տաւր հիւանդին՝ խմէ: (Ինքը շարունակում է):

Դ.—(Մօտենալով Համօին). Խմէ: Համօ ջան, խմէ, հոգսդ
սատկիմ. քոյրիկ, մէ լիմօնըմ բեր, մէջը քամենք, թթւաշ
էդնի, սիրտը կայնի. (Վ-ն բերում է մի կտոր լիմօն. Դ. մզում
է ամանի մէջ). խմէ, խմէ:

Վ.—(Մի կտոր շաքար մօտեցնելով Հ-ի բերնին). Խմի՛ր, Հա-
մօ ջան, էս շաքարն էլ բերանդ առ, որ քաղցրանայ:

Հ.—(Հնազանդում է եւ շաքարն էլ խրթխրթոցով ծամում, կուլ
տալիս). Ա՛խ, Աստուած:

Վ.—Ի՞նչ է, Համօ ջան:

Դ.—Ի՞նչ է, հոգսդ դուրբան, ըսա, մի քաշէի: (Ոմանը
դնում է կլոր սեղանի վրայ):

Ս.—(Վերջանելով աղօթքը). Մեղայ Գեղ, Տէր. Աստուծոյ
անունով խօսեցաւ. դա նշան է, թէ՛ չարն իսպառ հեռա-
ցաւ և ցաւն անդարձ վերացաւ. մեղայ Գեղ, Տէր. (Գիրքն
ու դանակը ծոցն է դնում). Իսկ այս իրեր՝ բոլոր միտեղ՝ չո՛

ընթացի կամ ուրբաթ օր՝ պէտք է տանել, ծածոնկ թա-
ղել ինքնասպանի գերեզմանի չորս բոլորը:

Հ.—(Մեղմ ծայնով)։ Ուստի Դաւիթ:

Դ.—Ի՞նչ է, հոգսւդ դուրբան. (մօտենում է հե կոտնում):

Հ.—Ուստի Դաւիթ, ես մեղաւոր եմ, ների՛ր ինձ, որ
քեզ վիրաւորեցի, ների՛ր ինձ:

Դ.—Հաջաթ չէ, հոգսւդ դուրբան. դարդ մի՛ էնէ. գո-
հըլը մէ քիչըմ դինջացի, չըւանը քանդենք, աղատ նստիս,
ման գաս:

Վ.—(Քնքշուծկաւ)։ Համօ ջան, եթէ հանգստացել ես,
բաց անենք:

Հ.—Վերգուշ ջան, դու էլ ների՛ր ինձ, սխալւել եմ. էլ
չեմ խմիլ. այժմ հասկացայ, թէ դրքան աղնիւ ես ու
բարի:

Վ.—Պարսն բժիշկ, բաց չանենք. մեղք է, արգէն խե-
լօքացել է:

Ս.—Սպասեցէք. ես կանգնեմ դռան մօտ և աղօթք ա-
նեմ, իսկ դուք բացէք. (կանգնում է դռան մօտ և աղօթք
մտնելում):

Գ.—Քնքշուծկաւ, վայ թէ բանանք, ու...

Հ.—(Հեզ կերպով)։ Էլ մի վախէք. հւստա, ես բոլորովին
հանգիստ եմ, ոչինչ չեմ անիլ. չէ՞ որ ես եմ մեղաւոր:

Վ.—(Չօքիով նրա մօտ. լացով)։ Համօ ջան, էլ գժութիւն
չես անի, ինձ կներես, որ քեզ վիրաւորեցի, ասա, կներես:

Հ.—(Լացով)։ Դու պիտի ինձ նեբես, անուշ ջան, ես եմ
քեզ էնքան վիրաւորել:

Դ.—Ախպէր Համօ, հասել է սհաթը, օրշնհալ է Աստ-
ուած, զար էս էլ էնոր կամբոջն էր, չըւաններդ պըտի քան-
դեմ. հըմը օրդում կըր, օր խելօք կմնաս և քոյրիկիս հէյ մէ
նեղութեանըմ սաղապ չես էղնի:

Ս.—(Դռան մօտ կրկնելով կանգնած՝ եւ աղօթք է մտնելում,
և և պատրաստւում փախչելու)։ Մեղա՛յ, Բեզ, Տէ՛ր, օգնական իմ
լեր և մի թողուր զիս մինչ իսպառ:

Հ.—(Հաւատարմաւ արտասանելով)։ Երդում եմ Աստուծոյ ա-
նունով, Ս. Միւռնի գօրութիւնով, երդում եմ ծնողնե-
րիս գերեզմանով, որ այսուհետեւ ոչ մի վիրաւորանք չհաս-
ցնեմ դրան իմ ամբողջ կեանքում, թէկուզ յանցաւոր էլ
լինի իմ դէմ:

Վ.—(Դրկելով Հ-ին և նստելով նրա մօտ)։ Ուստի, դէ՛հ,
բաց անենք, մեղք է, բոլորովին առողջ է:

Դ.—(Խաչակնքում է երեսը)։ Աստուծա կամքը օրշնհալ էդ-
նի. (բաց է անում պարանը):

Հ.—(Տարակուսած շարժում է զուխը)։ Փա՛ռք Բեզ, Տէ՛ր
Աստուած, փորձանք է, էլի, պատահում է մարդուս:

Դ.—(Նստելով տախտին և նրա մէջքին թեթեւ խփելով)։ Քա՛ջ
էղի, ախպէր ջան, փորձանքը կարկտաբեր սև-սև ամպերու
պէս կուզայ էլ, կերթայ էլ. ուղի էղի, օր մեծ փորձանքէ
պըծար:

Ս.—(Կամաց-կամաց սիրտ է անում, կէս քայլ առաջ է գալիս,
աչքերը երկինք յառած աղօթք մտնելում)։ Մեղա՛յ Բեզ, Տէ՛ր:

Հ.—Էլ մի ասիր, ուստի Դաւիթ, շատ մեծ փորձանք
էր. բայց դուք ներեցէք ինձ. ախ, Աստուած, ի՞նչ զարհու-
րելի երազ էր:

Դ.—(Վեր կենալով)։ Է՛հ, գոհութեն Արարչին, հիմի ես
էրթամ:

Վ.—(Վեր ցատկելով)։ Չէ, չէ, ուստի, խնդրում եմ՝ սպա-
սի, հաց, գինի, օղի բերեմ, միասին ընթրիք անենք, յե-
տոյ կգնաք. (ղոնից դուրս գալով)։ այնպէս չէ՞, պարսն բժիշկ
(վերջինս գլխով դրական նշան է անում):

Հ.—Իհարկէ, հւստա, սպասիր, միասին ընթրիք անենք,
իմ սիրտս էլ կբացւի:

Ս.—(Աղօթքն իսկոյն դադարեցնում է, ուրախացած գալիս,
Դաւին շատ մօտ նստում, աչքերը զցում դռանը), Մեղա՛յ Բեզ,
Տէ՛ր, յաւիտեանս ամէն. (զիրքն ու դանակը ծոյն է դնում):

Դ.—Էհ, լաւ, ըշտը մերոնք էլ տունը չեն, գնացել են քենուս տուն, ես էրթամ էլ, մեննակ պըտի մնամ (նստում է):

Վ.—(Քերթում է մատուցարանով հաց, պանիր, տոլմա, ափսէներ, զինի, օղի, բաժակներ եւ այլն, շարում սեղանի վրայ). Համեցէք, հաստա, համեցէք, պարոն բժիշկ, ներեցէք, որ շատ բան չունինք:

Ս.—(Ամենից անաջ է մօտենում սեղանին եւ օղի ամելով նըստում). Յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Դ.—(Նստում է սեղանի մօտ). Էհ, քոյրիկ, էդոր վրայ մի մտածէ, էսիկ էլ մեր տունն է:

Հ.—(Նոյնպէս նստում է սեղանի մօտ Դ-ի եւ Ս-ի մէջտեղ. վերջնս իր աթոռը քիչ հեռացնում է նրանից). Իհարկէ՞ ձեր տունն է, համեցէք, անուշ արեցէք:

Դ.—(Գլխարկը վերցնում, երեսը խաշակնքում է եւ օղու բաժակը բարձրացնում. նրան հետեւում են Հ. եւ Ս). Դուն ընչի՞ չես գայ, քոյրիկ:

Վ.—Դուք սկսեցէք, ես էլ հիմա կգամ. (Կանգնում, քիչ լսում է, գնում, գալիս եւ մանր-մունր գործի կենում):

Դ.—Էս թասը ես կիմեմ ձեր էրկուսի կենացը. (Ս. իսկոյն խմում է, բայց տեսնելով, որ Դ. դեռ շարունակում է իր խօսքը, նորից է լսում եւ բարձրացնում, իսկ ծախով մի կտոր հաց ու պանիր է ուտում). Ախպէր Համօ, քու կենացը. (սփիւլով քաժակին). Աստուած քեզի ամին չար ու փորձանքէ ազատ պահէ. քոյրիկ, քու կենացը, միշտ սիրով էդիք. էս օրը մոռցէք. էսիկ կարկուտ էր, էկաւ, դարկեց, անցաւ, գնաց. կիւնդրեմ Տիրոջից, որ պայծառ յարեւ միշտ, յաւիտեանս կան փայլէ ձեր գլխուն:

Ս.—(Ծոր տալով). Ամմէէն. (իսկոյն խմում է եւ սկսում ուտել):

Դ.—(Կամայ խմում է եւ խաղտա ծայնով երգում). Զախորդ օրերը՝ ձմրան նման գութան (կուգան) եւ կերթան, վհա-

տիլու չէ, վերջ կունենան, գութան ու կերթան. (սկսում է ուտել):

Հ.—(Բաժակը ձեռին). Այո, այո, կուգան ու կերթան. (կուտում է). հաստա, բայց ինձ ֆլաս չի տայ:

Դ.—Ձէ, հոգուդ դուրբան, բարեմաղթութեանը թասը մարդուս չի ֆլասէ, անուշ էրա:

Ս.—(Նորից բաժակը լցնելով). Իհարկէ, Սասուծոյ և սրբոյ անունը կոչելով՝ թէկուզ կժերով խմւի, մեղայ Բեզ, Տէր, (խմում է) անֆլաս է. (շարունակում է ուտել):

Վ.—Մինչդեռ նրանք զբաղւած են ուտելով — յարմար ըողելին բերում է ձկներով սինին եւ դնում տախտի տակ ափսպէս, որ ձկների ղնչները երեւում են. իսկ ինքը գալով նստում է Հ-ի եւ Դ-ի մէջ տեղը). Ո՛ւստա, երեւի դրա համար է, որ մեր տէրտէրներն իսկի չեն հարբում, է՛:

Հ.—Ո՛ւստա, քո կենացը, պարոն բժիշկ, քո կենացը. շատ շնորհակալ եմ ձեր եղբայրութեան համար...

Ս.—(Գլուխը բորում, հազում եւ արագ վրայ է բերում). Սա-կայն եղբայրութեան մէջ ես վարձատրութիւն գովելի է:

Հ.—(Չարունակելով). Վերգուշ ջան, քո կենացը, ներողութիւն եմ խնդրում արածներիս համար. (կէսը խմում է եւ դէմքը թռեցնում. սկսում է քիչ-քիչ ուտել):

Դ.—Է՛, Համօ ջան, ներողութիւնս գիտէք. ախր յո՛ւմ հետ չի պատահէ էսպէս փորձանքներ. դու բա, Աստուած վերջը բարի էնէ, մէկէլ չկրկնի:

Ս.—(Քերտը լիքը). Ամմէէն:

Վ.—(Բաժակները զինի է լցնում). Համեցէք, զինի խմեցէք, է՛. տո՛ւմա կերէք. (ինքը մի բաժակ վերցնելով). ձեր ամենքի կենացը, շատ և շատ շնորհակալ եմ, որ Համօին ազատեցիք փորձանքից. (շարժելով տէրողորմեան իր վզին). պարոն բժիշկ, ձեզնից էլ շնորհակալ եմ, որ ինձ դեռ հալածելու դօրութիւն տւեցիք. ձեր տէրողորմեայով ես հէնց ալ փա-

զգում եմ, որ կօրոզ եմ հիւանդներ բժշկել. Համօ ջանքս
քո կենացը, էլ մի վախենար, քեզ ինչ էլ պատահի, ես
կապտեմ. (Եմանքը խմում են իւր սկսում են տալիս զուգի):

Ա.—(Նայելով Ա-ին երգում է՝ գլուխը ծածկահարելով). Սէր Եմ
նախ Յիսուս, սիրով քով ձմեռ, սիրա իմ քանդակէն...

Հ.—(Նայում է տախտի կողմը եւ ցնցւելով կայում Գ-ին աչքի
քերը լայն-լայն բաց արած). Ուստա, ուստա, Վիրգուշ ջան,
Վիրգուշ ջան, էլի, էլի...

Ա.—(Իր վախով). Ի՞նչ եղաւ, Համօ ջան:

Գ.—(Վեր ցատկելով եւ նրան գրկելով). Ի՞նչ է, Համօ ջան,
ի՞նչ եղաւ...

Ա.—(Սոսկումով մի անկիւն է քաշւում, ծոցից խտրին դիրքն
ու դանակը հանում եւ սկսում աղօթք մտնել). Մեղայ, Բեզ,
Տէր, ընդէր թողեր զիս. (շարունակ թրում է). Թո՛ւ, ես
թքեմ, դու չքէ, թո՛ւ, ես թքեմ, դու չքէ:

Հ.—(Երեսը ծաղցնելով Գ-ի կրծքին). Էլի, էլի, էլի, էլի:

Դ.—Ի՞նչ է, ի՞նչ է՝ էլի, էլի:

Հ.—Ձուկ, ձուկ, ձուկ, էլի, էլի, վայ, վայ, վայ:

Ա.—(Մօտենալով). Ի՞նչ ձուկ, Համօ ջան, ի՞նչ ձուկ:

Դ.—Հանդարտելի, Համօ ջան, էստեղ ձուկ չկայ, մենք
քու քովդ ենք, մի վախենայ, հոգուդ դուրբան:

Հ.—Ձէ, չէ, չէ, էլի, էլի, պարանը, պարանը բերէք,
ինձ կապեցէք, էլի ձուկ, էլի, բերէք, կապեցէք...

Դ.—Ախր ձուկ չկայ, Համօ ջան, ընչէն կվախնաս:

Ա.—(Մի մեծ ծաղկինակ բերելով). Ուստա, գուցէ աչքին
բան է երեւցել, թող աչքերը կապենք, կհանդարտուի:

Հ.—Այո, այո, այո, կապեցէք, կապեցէք, էլի ձկները:

Դ.—Դէհ, քոյրիկ, թէզ, թէզ երա, կապենք:

Ա.—(Ծաղկինակով կապում է Հ-ի աչքերը. Դաւիթը նրան նըս-
տեցնում է իր տեղը). Համօ ջան, ձկներն էլ չէն երևում Կո:

Հ.—Ձէ, չէ, բայց ինչու ձկներս էլ չէք կապում, ուստա

Դ.—(Նստում է նրա մօտ, երեսը դնել տախտը, բայց ցանկաւ
ցատկում է տեղից). Վայ, քոյրիկ, էս ի՞նչ բան է, իմ աչքիս
էլ ձկներ էրեցան. (ծախով աչքերի խաւած աչքով ցոյց է տալիս
տախտի կողմը). Ըհնա, ըհնա, աչէ, աչէ, վայ, վայ, վայ
(գրկում է Համօին եւ երեսը ծաղցնում նրա կրծքին):

Ա.—(Նայում է տախտի կողմը եւ ձկները տեսնելով արագ
շրջում է երեսը, վերադառնալով փշով ծածկում դուխը, ձուկ-վախով եւ
արագ-արագ ասում—երեք անգամ). Հրաժարիմք իսպառնայի
և յամենայն չար խաբէութիւնէ նորա, հրաժարելով հրա-
ժարիմք:

Դ.—Թէզ, թէզ, քոյրիկ, իմ յաչքերս էլ կապելու չեմ
ւած ձկներ. (Հ. եւ Դ. վեր են կենում իրար դիմաւ եւ սկսում
դէս ու դէն պտտել). Թէզ, թէզ:

Հ.—Շուտով, շուտով, կապեցէք, կապեցէք, էլի, էլի:

Դ.—Կապեցէք, կապեցէք, ի սէն Սասըձու, էլի, էլի:

Ա.—(Ծիծաղելով շուտ բերում է մի ծաղկինակ էլ եւ Դ-ի աչ-
քերը կապում, ապա երկուսն էլ նստեցնում իրենց աթոռներին).
Նստեցէք, մի վախէք, ամեն ինչ կանցնի, տէրողորմեան
մօտս է, ես իսկոյն կհալածեմ չար դեմքին և երեքիդ էլ
կաղաւթեմ:

ԵՐԵՄԻՈՎ ՄԻՍՍԻՆ.—Այո, այո, շուտ, շուտ, անիծեմ
ձկներ:

Ա.—Մի վախէք, ես այնպէս կանեմ, որ ձկները թէկուզ
ձեր առաջն էլ լինին, էլի փառ չտան. (նայում է երկու վրայ
էլ, ծաղկինակն ծնով դուխը շարժում, աչք բռն մէջ փչում դեպի
վեր, իբր ասելով, նրանց խելը քամին տարել է), երբ որ ես կա-
սեմ—մէկ, երկու, երեք, դուք աչքերդ բացէք և էլ չէք
վախենար:

(Համօն եւ Դաւիթը կոյրի նման գեմբեր դէս ու դէն են շրջում)

չորս, ինչ որ ձեռքերը տարածում օդի մէջ՝ Վիրգուշին, փնտրելով.
Սեղրումն իր սարքերն է կրկնում:

Հ. — Վերգուշ, ջան, սրտեղ ես, մօտ արի՛, վախում եմ:

Դ. — Յո՛ւրտեղ ես, քոյրիկ, քոյրերս կեցի:

Վ. — (Ծաղրական ձեւեր անելով՝ ձկներով սինին բերում, դնում է սեղանի վրայ). Մի վախէ՛ք, վտանգն անցաւ. էլ ձուկ չկայ. բացէ՛ք աչքներդ. մէկ, երկու, երեք:

Դ. և Հ. — (Միասին բաց են անում՝ աչքները եւ՝ տեսնելով ձկներն իրենց առաջ դրած՝ իսկոյն ձեռներով փակում են դեմքները եւ կռնում գիտին: Էս ի՞նչ հրաշք է, Տէ՛ր Աստուած:

Ս. — (Քիչ յետ է նայում եւ տեսնելով նրանց՝ կրկին կուչ է գալիս). Թո՛ւ, ես թքեմ, դու չքէ՛:

Վ. — (Սաստիկ ծիծաղելով). Այ՛ո, խելօք աղամարդիկ, շատ մեծ հրաշք, որը ձեզ ցոյց է տալիս, որ եթէ անխելք կանայք կամենում են, Մուկուշի բերած ձկները մեր մարգերունքն էլ բուսնում են:

(Թողորը վեր են կենում եւ զարմացած նայում մէկ Վիրգուշին, մէկ ձկներին):

Հ. — (Մօտենում է նրան). Ուրեմն էս բոլորը դո՛ւ ես սարքել, հա՛:

Վ. — (Գրկելով նրան). Իհարկէ՛ քո, Կոմս ջան, կբնկիս խոլքով:

Հ. — (Սաստիկ անօթով էին ճրում է եւ ձեռքերը դիպն խիում). Ո՛րքան յիմար եմ եմ:

Ս. — Մեղայ Դեղ, Տէ՛ր. (Իսկոյն շրջում է, անկիւնում կուչ գալիս, ծախ ձեռքը դիպն դնում, աջով ծոցից դիրքը հանում եւ արագ ու բարձր ասում). Հրաժարիմք ի տատանայէ և յամենայն խաբէութենէ նորա:



Դ. — (Գլուխն օրօրելով՝ եւ օծիրը թնփ տալով՝ իր մուրճը վերջնում, ուկում է գնալ). Դադ, բէղադեղանանց ձեռքէն անցրո՛ւմ

Վ. — (Չախ՝ ձեռքը կողքին, աջով տէրողորմեան վրիճ հանելով՝ բարձր եւ յաղթական ծիծաղում է). Հա՛, հա՛, հա՛, հա՛... —

Հ. — (Նայելով մօտիկ իր ձեռքին՝ հարցնում է Վ. —)

Վ. — (Կարծիքով չէ. անցնում մի քանի քայլ հեռու և նայում է իր ձեռքին):

Հ. — (Նայելով Վ. —)

Վ. — (Նայելով Հ. —)

Հ. — (Նայելով Վ. —)

Վ. — (Նայելով Հ. —)

Հ. — (Նայելով Վ. —)

Վ. — (Նայելով Հ. —)

Հ. — (Նայելով Վ. —)

Վ. — (Նայելով Հ. —)

Հ. — (Նայելով Վ. —)

Վ. — (Նայելով Հ. —)


Հ. — (Նայելով Վ. —)

Վ. — (Նայելով Հ. —)

Հ. — (Նայելով Վ. —)

Վ. — (Նայելով Հ. —)

Հ. — (Նայելով Վ. —)



Հայկական հանրապետության
Կառավարության հրամանով
Հասցե: Երևան, Կոմիտասի պող. 10
Հեռ. 1234567

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ
ՀԱՍՏԻՍՈՒՄ

Հայկական հանրապետության
Կառավարության հրամանով
Հասցե: Երևան, Կոմիտասի պող. 10
Հեռ. 1234567



Հայկական հանրապետության
Կառավարության հրամանով
Հասցե: Երևան, Կոմիտասի պող. 10
Հեռ. 1234567

<< Ազգային գրադարան



NL0375389

60894

27617



ԱՄՈՐԱՅԻՆ

1
2

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

891.99

բ-91